ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ
Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ինֆորմատիկա

Մասնակից՝ Անահիտ Եղշատյան

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ինֆորմատիկա առարկայի դասավանդման ընթացքում:

Ղեկավար՝ Գայանե Կոստանդյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------2

Հետազոտական թեմայի արդիականությունը

Հետազոտության նպատակը

Հետազոտության խնդիրը ----------5

ԳԼՈՒԽ 1

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

առարկայի դասավանդման ընթացքում: ----------6

ԳԼՈՒԽ 2

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ինֆորմատիկա առարկայի դասավանդման ընթացքում:----------12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Վատ ուսուցիչը ճշմարտությունը

մատուցում է,

լավը՝ սովորեցնում գտնել այն»

Դիստերեգ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընկալվում է բավականին լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Ուսումնական գործընթացի հաջողությունը մեծապես կապված է ուսուցչի և սովորողի փոխհարաբերություններից, շփման եզրերից, մեկը մյուսի որակներն իմանալուց, փոխադարձ հարգանքից: Անհնար է կատարելագործվել և մեծ առաջընթաց գրանցել ուսուցման գործընթացում, երբ թերի է ուսուցման դաստիարակչական բաղադրիչը, ուստի արժեքային համակարգի, բարձր մարդկային որակների ձևավորումը ուսումնառության կարևորագույն բաղադրիչն է: Այս արժեքները խիստ կարևոր են թե' անհատի, թե' հասարակության համար: Հարկավոր է գիտակցել, որ դպրոցի առաջնային առաքելությունն է կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունը, ուստի այդ գործընթացը պետք է լինի շարունակական: Սովորողը պետք է հասկանա, որ յուրաքանչյուր առարկա ունակ է իրեն տալ բարձր բարոյական արժեքներ ու մարդկային որակներ: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր

հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում, աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Սակայն հարկ է փաստել, որ դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Այս կարևորագույն նպատակին հասնելու համար պետք է խոսուն քայլեր կատարեն դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները: Սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների

ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն. **Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար:**

Գաղտնիք չէ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, համացանցի համընդհանուր կիրառությունն իրենց հետքն են թողնում սովորողների աշխարհընկալման և աշխարհայացքի ձևավորման վրա:Ուստի կարևորում եմ ինֆորմատիկայի ուսուցչի ջանքերը սովորողների մոտ արժեքային համակարգ ձևավորելու ճանապարհին: Ինֆորմատիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական ընթացքում դասընթացի նյութերի օգնությամբ արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Հետազոտական թեմայի արդիականությունը:

21-րդ դարի հասարակության մեջ անհատի իմաստալից մասնակցությունը պահանջում է սովորելու և աշխատելու համար տեխնոլոգիական լուծումներ կիրառելու կարողություն և հմտություն: Ձևավորվում է նոր մարտահրավերներին համապատասխան կրթական միջավայր: Հաշվի առնելով այս համատեքստը՝ ինֆորմատիկա առարկայում ներառված գիտելիքներն ու հմտությունները կօգնեն տարբեր ունակություններ ունեցող աշակերտներին հաղթահարել 21-րդ դարի մարտահրավերները: Կարծում եմ, որ ինֆորմատիկայի ուսուցիչը շատ անելիք ունի այն առումով, որպեսզի կարողանա սովորողին բերել այն գիտակցմանը, որ համացանցը սոսկ զվարճությունների հարթակ չէ, այլ դրա ուղիղ ներգործությունը կարող է ձևավորել բարձր արժեքներ: Միևնույն ժամանակ համացանցն ունակ է սերմանել անթույլատրելի վարքագիծ ու գործողություններ: Այս մարտահրավերն էլ հանդիսանում է մեր թեմայի արդիականության հենքը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել համացանցի դերը սովորողի կյանքում, վերլուծել ինֆորմատիկայի օգնությամբ սովորողներին վտանգներից զերծ պահելու, ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու հնարավորությունները:

Հետազոտության խնդիրը: Դիտարկել առարկայի դասավանդման կարևորությունը սովորողների մեջ բարձր արժեքներ ձևավորելու տեսանկյունից, վեր հանել տեխնոլոգիաների համակողմանի ներգործության նշանակությունը նոր ձևավորվող սերնդի հոգեբանության, բարոյական արժեքների ձևավորման առումով:

ԳԼՈՒԽ 1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Սովորողների կարողությունների, հմտությունների ձևավորման ու գիտելիքների ընդլայնման կողքին դասապրոցեսի ժամանակ կարևոր հանգամանք է նաև վերջիններիս արժեքային համակարգի ձևավորումը: Չափազանց կարևոր է արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ: Այս արժեքների ձևավորման վրա էլ հետագայում ձևավորվում է մարդու բարոյական նկարագիրը: Անշուշտ, արժեքների մեծ մասի հենքը էթիկական նորմերն են, որոնք անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար, քանի որ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից՝ հանուն ընդհանուր շահի: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ

արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի և իր կայուն դիրքն ունենա սոցիալական միջավայրում: Առանց արժեքային համակարգի ձևավորման անհնար է ապրել բնականոն ձևով, պահպանել բարեվարքություն, նույնն ակնկալել դիմացինից, ուստի ուսումնական գործընթացում արժեքային համակարգի ձևավորումը խիստ կարևոր ենք համարում: Կրթության հենքը հենց արժեքային համակարգն է: Այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում գիտելիքից բացի, այսօրվա սովորողից պահանջվում է արժեքների և դիրքորոշման ձեռքբերում: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սովորողները դարձել են առավել ինքնուրույն, համակողմանի զարգացած: Դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է դաստիարակչական գործառույթը՝ սովորողների հայացքների, համոզմունքների, գիտելիքների հիման վրա գիտական աշխարհայացքի և արժեքային համակարգի ընդհանուր մշակույթի ձևավորումը: **[Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018]:**

Այսպիսով, աներկբա է, որ դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է նաև կրթության ընթացքում ստացած տեղեկատվության միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ: Գրեթե միշտ դպրոցն է ստանձնում հանրության մեջ տարածված արատները պախարակողի դերը, պայքարում դրանք արմատախիլ անել սովորողների արժեքային համակարգից, ցույց տալ սովորողին լավի, բարու, մարդասիրության, ազնվության ու աշխատասիրության օրինակները: Այս առումով կարևոր է ցանկացած ուսումնական առարկա, որը սովորողին տալիս է իր դրական օրինակն ու ուղղորդումը: Օրինակ՝ մայրենիի ուսուցման ժամանակ առակների, հեքիաթների օգնությամբ է սովորողի մեջ բարձր մարդկային արժեքներ դրվում, ֆիզիկայի քիմիայի դասերին գիտնականների ու մտածողների կյանքն է օրինակ բերվում, ինչը նաև մոտիվացնող է, իսկ ահա ինֆորմատիկայի դասին կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որոնք կարող են

արժեհամակարգ ձևավորել, քանի որ այս գիտությունն այսօր ամենուր է `թե' դրական, թե բացասական դրսևորումներով: Մարդկային բարձր արժեքները շատ կարևոր են եղել մարդկային հասարակության համար հնուց ի վեր, այդպես է և այսօր, ուստի մարդկային որակական այս հատկանիշը պետք է անդադար ուշադրության կենտրոնում լինի: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Դ.Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ [**Д. А Леонтев, «Развитие личностных ценностей в общественном контексте» Вестник Московского Университета,1997. №1. сс. 20- 27]:** Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում: Կարող ենք վստահաբար պնդել, որ սովորողի արժեհամակարգի հիմնական մասի ձևավորման համար պատասխանատու է դպրոցական միջավայրը, քանի որ այստեղ է տեղի ունենում նաև սովորողի իմացական առաջընթացն ու կարողունակությունների զարգացումը, իսկ դրանք մեծապես կապված են արժեքային համակարգի հետ և փոխլրացնում են միմյանց: Սկսենք նրանից, որ սովորողը պետք է հասկանա,

թե ինչ է դրական վարքը, փորձի պահպանել բարեվարքության կանոնները: Սա անկյունաքարային նշանակություն ունի նաև բուն ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման համար: Ոչ բարեվարք, վարքային խնդիրներ ունեցող սովորողը միշտ էլ խաթարում է դասարանի կայուն մթնոլորտը, խանգարում դասընկերներին: Այս առումով կարևոր է ուսուցչի կողմից դրական վարքի պահպանման վերաբերյալ տարվող աշխատանքը: Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանը կենտրոնացած է ողջ

դպրոցի վրա՝ նպատակ ունենալով ներդնելու աշակերտների շրջանում հաճախ հանդիպող անցանկալի վարքագծերի կանխման դրական ռազմավարություն [**«Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2020**]:

Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Այս առումով կրկին պետք է առանձնացնել դպրոցի անուղղակի և ուղղորդված ներգործությունը, ինչը միտված է սովորողի արժեհամակարգի զարգացմանը: Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում [**Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում», էջ 397**]: Նախ արձանագրենք այն հանգամանքը, որ դպրոցում տիրող բարոյահոգեբանական միջավայրը, մարդկային փոխհարաբերությունների բարձր մակարդակն անուղղակի կերպով ազդում է սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա, իսկ մյուս կողմից ուսումնական առարկաների դասավանդման ժամանակ ուսուցիչներն ուղղորդված դաստիարակչական աշխատանքների միջոցով սովորողների մեջ դաստիարակում են արդար ու ազնիվ մղումներ, բարոյական արժեքներ: Ստացվում է, որ սոցիալական միջավայրն իր ուղղակի

ազդեցությունը կարող է ունենալ անձի՝ այս պարագայում սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա: Սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա: Ուստի շատ կարևոր է սոցիալական միջավայրի մղումները, ձգտումները, կողմնորոշումը, քանի որ բացասական ազդակները նույնպես կարող են ազդել սովորողի արժեքային համակարգի վրա: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն [**Վ. Ա Սուխոմլինսկի, «Միրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977, էջ 317**]:

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել սովորողի համար: Նա պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները: Օրենսդրական դաշտում ևս կան հստակ նկատառումներ, թե ինչպիսին պիտի լինի սովորողի արժեքային համակարգը,

համաձայն որոնց՝ արժեքային համակարգի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝ ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում, դ) գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը, ե) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ, զ) կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը, է) գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, ը) գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը, թ) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ, ժ) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը, ի)դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը, լ) մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում [**https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923 ՀՀ Կառավարության որոշում**]: Այսպիսով, կարող ենք պնդել մեր այն համոզմունքը, որ սովորողի արժեքային համակարգի հիմնասյուները դրվում են դպրոցում: Դասապրոցեսը, սովորողների միջանձնային շփումները, լայն շրջանակների հետ համագործակցությունը իրենց ազդեցությունն են թողնում սովորողի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի

ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ: Սովորողները պետք է քաջ գիտակցեն նաև իրենց պարտականությունները: Դրանք չիմանալը կամ դրանց չհետևելը նույնպես խաթարում է դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը: Սովորողի պարտականություններից են՝ կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները, հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին [https://www.arlis.am/documentview.aspx?docID=123598 «Հանրակրթությանմասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 3]:

ԳԼՈՒԽ 2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ինֆորմատիկա առարկայի դասավանդման ընթացքում:

Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա…

Դեյվիդ Հյում

Կուզենայի այստեղ մեջբերում անել երկրորդ համաշխարհային պատերազմի ականատեսի խոսքերը.

Ես ապրել եմ համակենտրոնացման ճամբարի մղձավանջները:
Իմ աչքերի տեսածը ոչ ոք չպիտի տեսնի՝
Ուսյալ ինժեներների ստեղծած գազախցիկներ,
Երեխաներ, որոնց թունավորում են կրթված բժիշկները:
Մանուկներ, որոնց սպանում են մասնագետ բուժքույրերը,
Կանայք ու նորածիններ, որոնց գնդակահարում են դպրոց ու

Համալսարանավարտ անձիք: Այնպես, որ ես չեմ հավատում կրթությանը:

Ես մի խնդրանք ունեմ՝ օգնեք, որ ձեր աշակերտները ՄԱՐԴ ԴԱՌՆԱՆ:

Ձեր ջանքերով չպետք է ուայալ ճիվաղներ կամ հմուտ մոլագարներ ստեղծվեն: Կարդալը, գրելը, հաշվելը կկարևորվեն, եթե դրանց շնորհիվ մեր երեխաներն ավելի բարի դառնան:

Ականատես

Գաղտնիք չէ, որ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, համացանցի համընդհանուր կիրառությունն իրենց հետքն են թողնում սովորողների աշխարհընկալման և աշխարհայացքի ձևավորման վրա: Ուստի անչափ կարևոր է ինֆորմատիկա առարկայի դասավանդման ընթացքում ևս սովորողների մեջ բարձր արժեքային համակարգի ձևավորումը: Ինֆորմատիկայի դասաժամը լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին դրական ու արժեքավոր սերմեր տալ սովորողին: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորի գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն: Իսկ ահա դասաժամի պրակտիկ

ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում օգտագործելու կարողություն: Ինֆորմատիկա առարկայի դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի՝ գաղափարի օգտագործման վրա: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, խոր համոզմունքով և հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը, շատ առումներով կապահովեն ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ: Ինֆորմատիկայի ուսուցիչը, պայմանավորված տեղեկատվական հոսքերի ակտիվությամբ, այս համատեքստում ունի նաև այլ տեսակի առաքելություն: 21-րդ դարում, երբ տեղեկատվական տեխնոլոգիաները գերզարգացած են , իսկ տեղեկատվական հոսքը հեշտ և թափանցիկ, անհրաժեշտ է տարբեր ժողովուրդների լեզվի, մշակույթի, պատմության հանդեպ հարգալից վերաբերմունքի հետ համատեղ ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտությունը ձևավորել և հայայեցի մեծանալ: Ինֆորմատիկայի դերը անփոխարինելի է այս դեպքում: Սկսենք ամենակարևորից. բոլոր հաղորդագրություններն ու էլեկտրոնային նամակները գրել միայն ոսկեղենիկ հայերենով և առանց տառասխալների: Տարբեր տարիքային խմբերում կատարած հետազոտության արդյունքում պարզվեց, որ աշակերտներից շատերը հաղորդագրությունները գրում են միայն լատինատառ, որը անհարժեշտ է արգելել: Ինֆորմատիկայի ուսուցչի դերն այս հարցում առավել կարևոր է : Հարկավոր է յուրաքանչյուր ծրագիր, յուրաքանչյուր թեմա անցնելիս պրիզման անցկացնել ազգային ավանդույթների պահպանումը կարևորելով: Մի պարզ օրինակ ՝ Paint գրաֆիկական խմբագրիչն ուսումնասիրելիս երբ աշակերտներին հանձնարարում եմ նկարել եռագույն դրոշը, նրանք առանց դժվարության, շատ արագ նկարում են այն, առանց որևէ իմաստ ըմբռնելու, իսկ երբ հանձնարարում եմ գրել , թե ինչ է խորհրդանշում եռագույնի երեք գույները , որն է դրոշի պատմությունը, դասը բոլորովին այլ իմաստ է ստանում: Երեխան արդեն կրտսեր տարիքից իմանում է, որ դա մեր պետականության խորհրդանիշն է, որ վաղը հպարտությամբ ծածանելու է այն, իսկ ավելի մեծ տարիքում,

եթե հարկ լինի, կյանքի գնով պաշտպանելու է այն։ Տեղադրում եմ կազմակերպված հարցումը և նրա մի քանի պատասխաններ։

https://docs.google.com/forms/d/1rGhlYI8rh-tS0d45GXcE2VNzA8WUf-Hdttv2xy8spP0/edit

https://docs.google.com/forms/d/1rGhlYI8rh-tS0d45GXcE2VNzA8WUf-Hdttv2xy8spP0/edit#responses

Նշվածներից ընտրել դասին ներկայացվող խնդիրներ, որոնք արժեհամակարգ են ձևավորում;

Верных ответов: 11 из 15



Նշվածներից ընտրել դասին ներկայացվող դաստիարակչական խնդիրները:

Верных ответов: 10 из 15





Անհրաժեշտ է նաև սովորողին փորձել զերծ պահել վտանգավոր ու կործանիչ համացանցային հարթակներից՝ շատ դեպքերում ուղիղ ցույց տալով դրանց վնասակար ազդեցությունները մարդու կյանքի, անվտանգության վրա: Բերենք մի օրինակ այն մասին, թե համացանցային լաբիրինթում ինչպես կարելի է ծուղակն ընկնել ու դառնալ զոհ: Հայտնի են մի քանի վտանգավոր հարթակներ՝ «Կապույտ կետ», «Հանգիստ տուն», որոնք ստիպում են դեռահասներին ինքնասպանություն գործել: ՀՀ-ում ևս գրանցվել են նմանօրինակ դեպքեր, ուստի շատ կարևոր է, որ ինֆորմատիկայի դասաժամին առարկայից ստացած խորքային գիտելիքն ուսուցչի անմիջական վերահսկողությամբ ուղղորդվի ոչ թե անհասկանալի բովանդակության հարթակներին, այլ կիրառվի, ասենք ինտեգրված դասերի կամ այլ արդյունավետ գործունեության համար: Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի նաև կիբեռհետապնդման դեպքում՝ ապաակտիվացնելով և փակելով տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցումը: **[https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան]:** Այս պարագայում սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում:

Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝ սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար [**https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան**]: Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ չենք կարող շրջանցել սոցիալական ցանցերի ազդեցությունը սովորողների վրա: Այս հետաքրքրությունը աննախադեպ աճ է գրանցել ՀՀ-ում և ողջ աշխարհում, սակայն դրանց մի քանի տեսակներն իրենց բովանդակային ու տեսողական առանձնահատկություններով կործանարար ազդեցություն են ունենում սովորողների հոգեկերտվածքի, արժեքային համակարգի ու հետաքրքրությունների ձևավորման վրա: Սա վերածվել է կախվածության, որը ոչ մի դրական բան չի պարունակում, որևէ ուսուցողական գործառույթ չի իրականացնում: Ուստի, կարծում եմ, այդ հորինված իրականությունը խարխլում է հայեցի մտածելակերպը, ջնջում բոլոր կարմիր գծերը, ինչն անթույլատրելի է: Այս պարագայում ևս կարելի է հույս դնել ինֆորմատիկայի ուսուցչի վրա: Սոցիալական ցանցերի օգտագործումը ազդում է դեռահասների վարքի վրա: Սոցիալական ցանցերից օգտվող դեռահասները ավելի հաճախ են առողջության համար վտանգ պարունակող պահվածք դրսևորում, ինչպես օրինակ ծխելը, խմելը և այլն [**ՀՀԿրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականիդեկտեմբերի 17-ի N 1677-Ա/2 հրաման, «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց ծնողների համար»]:** Ի վերջո չպետք է մոռանալ, որ ինֆորմատիկան ուսումնասիրում է ինֆորմացիայի ստացման, մշակման, պահպանման և փոխանցման գործընթացն ու դրան ուղղված մեթոդներն ու միջոցները, ուսումնասիրում է ինֆորմացիայի և հաշվարկման տեսական հիմունքները և համակարգչային համակարգերում նրանց իրականացման ու գործածման կիրառական միջոցները: Այս տեսակետից մեծ նշանակություն կարող է ունենալ ինֆորմատիկայի ուսուցչի մանկավարժական խորհրդատվությունը սովորողին, քանի որ արգելել ուսուցիչը իրավասու չէ, կարող է բացառապես ուղղորդել: Կրթության նոր հայեցակարգի մշակման տեսանկյունները վերաբերում են ուսուցչի և աշակերտի փոխգործակցության ձևերին, սովորողի արժեքային համակարգի ձևավորմանը, նրա իրականացման միջոցներին և եղանակներին: Ուսուցման

ավանդական համակարգում առկա են ոչ միայն առարկայական, մանկավարժամեթոդական, այլև դաստիարակչական հիմնախնդիրներ, որոնց անդրադարձել են նշանավոր մանկավարժներ, փիլիսոփաներ, հոգեբաններ, և որոնք տակավին լուծված չեն: Խոսելով դաստիարակչական հիմնախնդիրների մասին՝ նշենք, որ ներկայումս դրանք առավել սուր բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում երեխայի մանկությունն ընթանում է այնպիսի սոցիումում, որին բնորոշ են արժեքային սնակությունը, հստակ նպատակային կողմնորոշիչների բացակայությունը, սոցիալական շերտավորումների խորացումը, մանկական և պատանեկան միջավայրերում ձևավորվող կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները [**Ա. Մ. Զաղոյան «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում», Երևան, 2014, էջ 188**]: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հասարակության կորիզը առողջ, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է: Կարծում ենք՝ ուսումնադաստիարակչական գործընթացը գործի է դնում իր ողջ մարդկային ներուժը՝ հմուտ ուսուցիչներին, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի լինի հենց այդպիսին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ուսումնական գործընթացի արդիականացմանն ուղղված մի շարք հիմնահարցեր՝ կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կներկայացնենք ստորև. Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաճ կատարումից: Ինֆորմատիկայի ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի համացանցում: Պետք է սովորողին պաշտպանել ապատեղեկատվությունից, կիբեռհարձակումներից, կիբեռբուլինգից: Հարկավոր է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել: Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ՝ դաստիարակելով մարդկային բարձր արժեհամակարգով օժտված ապագա քաղաքացուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923 ՀՀ Կառավարության որոշում

2. https://www.arlis.am/documentview.aspx?docID=123598 «Հանրակրթությանմասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 3:

3. ՀՀԿրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականիդեկտեմբերի 17-ի N 1677- Ա/2 հրաման, «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց ծնողների համար»:

4. Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:

5. Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2020:

6. Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:

7. Վ. Ա Սուխոմլինսկի, «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 19

8. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

9. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

10. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ: 4. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ: